

րենց հասնելու համար. գրեթէ գրեթէ քաղցր շունչերնին ալ կ'առնէր. ինչպէս դիմանայ: Մազ մնաց որ պիտի յարձըկէր, երբ ձայն մը կարծես թէ աղաղակեց իրեն աղեացը խորերէն:

— Կ'ուզեմ գնել ուրախութիւնդ այս տըկար արարածներուն հանգիստը տալին. ու վրայ ընելով, զորոնք այնպէս չարաչար անարգեցիր ալ: Կ'ուզեմ ատոնք զոհել իրենց պատանեկութեանն համար խիստ գողտր տեսարանի մը, որուն յիշատակը պիտի քալէ միշտ կեանքերնուն հետ տաղտկացնելու համար զայն:

Հնազանդեցաւ. մայրենի զգացմունք մը զինքը պիտի մղէր, նոյն զգացմունքը զինքը զսպեց: Մայրը յաղթանակեց մօրը վրայ:

Նոյն ատեն պոռայ պզտիկ աղջիկը.

— Տէր իմ Աստուած, ձագերը միս մինակ են, անօթի են, զիրենք կերակրողն ալ չկայ. մեռաւ արդեօք. զինքը սպաննեցին որ չդառնար:

— Մօրերնուս տանինք, ըսաւ անդրանիկը, ինքը կը հոգայ. վասն զի միշտ կ'ըսէ որ երեսի վրայ ձգուածներու պէտք է գութ և պաշտպանութիւն ցուցնել:

Խեղճ Լէտի Նորֆոլք. ասիկայ քուկին դատակնիքդ չէ, դու որ մեռած չես և սակայն չդարձար: Եղկելին իբրեւ թէ տղոցմէն վնասուած ըլլար, բոլոր ուժը գտաւ փախչելու համար: Արագ և հաստատուն քայլով մը գնաց դէպ 'ի անտեղը ուր ձգեր էր զփրանկիսկա. առանց բառ մը արտաբերելու՝ նշան ընելով որ ետեէն դայ, մտաւ շուտով կառքը. կառավարին խարազանը շառաչեց օդուն մէջ, ձիերը սկսան թրուչիլ:

Փրանկիսկա բոլոր ճամբուն ատենը զգուշացաւ տիրուհւոյն լռութիւնը կրտրելէն. բայց երբ մերձակայ քաղաքը հասան՝ իմացաւ ճիշտ մը փրցընելով որ այս լռութիւնը... յաւիտենական պիտի ըլլար:

Օ Տ Ի Պ Է Ռ

Անառատիկ կամ ես առ դուրս և թախեմ.

(Յայտն. Դ. 20):

Մեր ոմն էր տառապեալ, և նստէր և ունկն դնէր մոնչման ծովուն, և լսէր զգոչիւն ալեացն՝ որպէս վերանային և բախէին ուժգին ընդ ժայռս խարակացըն, իբրու եթէ փլուզանել իմն գնուսին: Կայր դադարէր 'ի գիշերի և ասէր. «Աստուած, ողորմեա մանկանցն որք նաւեն զհասարակ գիշերաւ, (թէպէտ և ոչ իմ իցեն նոքա.) քանզի 'ի վերանալ ալեացն, և 'ի հնչել հողմոյն ընդ պատուհանս, և 'ի բախել ընդ ձեղունս, 'ի կոտորել զպաղպաղուն կատարս վերնացայտ կոհակացն, և 'ի սփռել որպէս փետուրս ցիր և ցան 'ի դաշտի, յայնժամ յիշեմ՝ զերկոսին պատանեակսն իմ: պատանեակքն իմ'որք գուն գործէին վաստակէին և ոչ թողուին զիս կարօտեալ, և ոչ տային ինձ թոյլ վճարել զտասանորդ շինին մերոյ: Ոչ, չեն իմ'սոքա. իմ պատանեակքս ծովակուր եղեն, երկեակքն իմ այնոքիկ, — մինչ չե իսկ ծնեալ էր բազմաց 'ի սոցունց աստի: Քաջ գիտեմ թէ քանի խիստ իցեն հարուածքն, յորմէ հետէ տեսի զկինս իմ տառապեալ զի ելանէր և իջանէր և դարձեալ երթայր և դայր 'ի վեր 'ի վայր, և ես երթայի զհետ նորա, և ոչ բաւէաք լսել զձայն իրերաց 'ի սաստկութենէ մոնչելոյ հողմոյն և ծովուն՝ որ զայրանայր և որոտայր և բաղխէր 'ի մէջ գիշերին, — յահեղն յայն, յերկարագոյնն և մթազինն գիշերաց՝ զոր թէ ծնողք 'ի գլուխ հանին: Եւ ահա լուսին ոռ վերջալոյս հարկանէր աղօտ աղօտ 'ի վերայ նահանջաբեկ ալեացն: Եղևիկ ինձ. կորուսին և այլ արք զորդեակս իւրեանց. լացին և այլ կանայք 'ի վերայ անշնչապեալ չրթանց, և բերեալ 'ի տուն ցամաքեցուցին զնոսա. և տեսին զփայտն զալէկոծ՝ անկեալ եղեալ 'ի ծովափին՝ որ նաւակն էր երազասահ, — այլ աւուրը միով յառաջ. իսկ յերկրորդում մակընթացութեան ծովուն՝ տեսին զդրա-

ցիս՝ զի ժողովեալ զբեկորսն արկանէին 'ի խարոյկ իւրեանց :

Այո, և ես էի հուժկու և քաջակազմ մարմնով, գործասէր և ժիր. այժմ՝ կեղեանք իմն անպիտան. ժամ է և ինձ անկանելոյ. զհասարակաց ճանապարհն երթամ և ես. բեռն լինիմ այլոց. նա և անձին իսկ գլխովին բեռն եմ ես : Այլ տակաւին կարեկից լինիմ նաւագին՝ 'ի մրրկայոյդ գիշերի. ցաւ է ինձ ընդ կանանին որ հսկենն 'ի ծովափունս : Ո՛հ, արդարեւ, եթէ էր իմ պարապեալ ուսման՝ աղերս արկանէի Տեառն հասուցանել զնոսա (յեզր.) բայց իմ ուսեալ երբեք չիք. ուսանել զպրութիւն՝ կենցաղ անտանելի է ինձ. սակայն քաջալերիմ ասել. Ո՛վ Տէր, Աստուած բարութեանց, այր մի տառապեալ եմ ես, անձն ջախջախեալ, և ապուշ՝ զի յանգրգնիմն խօսել իսկ ընդ քեզ. բայց գրեալ է 'ի գիրս, որպէս լուայ ասել յորոց գիտէին վերձանել, եթէ որպէս 'ի դաւտեանն քում սիրեցեր դու զծով, և կենակից եղեր մարդկան ձկնորսաց, գիտելով չափ թէ յորքան վտանգս գիմագրաւիցին, և որքան տագնապք տարակուսանաց 'ի վերայ կայցեն նոցա : Իսկ ես, Տէր բարերար, նաւակ ոչ ունիմ. անցեալ եմ զաւուրբք, անցեալ զաւուրբք. պատանեակքն իմ ծովակուր եղեն, և ինքնին թաղեցի զկինս իմ տառապեալ. իսկ աղջկունք իմ մատաղք՝ այնքան վաղ մեռան, մինչև գրեալ թէ ոչ իսկ յիշեմ զտիպս կերպարանաց նոցին : Դու գիտես, Տէր, թէ որպէս մատաղօրեայք էին. գիտեմ զի առ քեզ գնացին, այլ մոռացայ զկերպարանս երեսացն, թէպէտ և բազում ցաւօք զրկեցայ 'ի նոցանէ : — Ո՛վ Տէր, էի ես այր ուժեղ. և հանի պաշար յոգուտ, և դրամ ոչ սակաւ հայթհայթեցի ինձ 'ի ծովէ այտի քումէ մեծէ. իսկ այժմ գոչեմ առ քեզ վասն նոցա 'ի գիշերի. և թէպէտ և ծերացեալ եմ յոյժ, ցաւ է ինձ տակաւին ընդ մանկունսն իմ. և իցեն բազումք 'ի մրրկեալ յայսմ գիշերի որք ահիւ տագնապիցեն վասն որդւոց իւրեանց : — Աստուած ու

ղորմած, լեր նոցա ապաւէն. զերծո ըզբարերարոյ մանկունս նոցա, զպարծա նրա ծնողացն. տուր նոցա լսել յառաջիկայ տեղատութեան ծովուն՝ զբարեբաստիկն զամենացանկալին ձայն, զմըխիրճ յատակի նաւակացն 'ի յաւազանդր : Ոչ գիտեմ աղօթել ողորկագու նիւք բանիւք. ոչ ինչ գիտեմ. ոչ ուսեալ է իմ զպրութիւն և ոչ ուսանել կարեմ. անցեալ եմ զաւուրբք, անցեալ զաւուրբք : Ասեն թէ ոչ իմիք կարօտիցիմ, և ունիցիմ վճարելոյ զտասանորդ շինին. այլ տաղտկացեալ եմ 'ի լսելոյ, և կրակս հագիւ ջեռուցանէ զիս : Աստուած իմ, փրկեա զիս, զի այր մեղաւոր եմ ես. և զերծո զկեանս այնոցիկ՝ որք կարողք իցեն դեռ 'ի գործ վաստակոյ. պատուականք են ինձ նոքա, այո պատուականք : — Այլ սակայն տաղտուկ է ինձ, ո՛վ Տէր. զի նստիմ և կամ միայնակ, և դուն ուրեք զցայգա գէպ լինի յիշել զիս ումեք և զալ առնուլ զաթոռակն և նստել յաղքատիկ տեղուջ և խօսակից լինել առ վայր մի : Այլ քաջ յիշաւունս իսկ. զի առ ինչ գայցեն նոքա : — Հողմն եւեթ է որ բախէ զդրունս իմ. և ո՛հ, թէ որպէս ուժգին և յերկար բաղխէ. նա միայն է յամենայն արարածոց Աստուծոյ՝ որ յիշիցէ զիս և մտցէ 'ի ներքս » :

Արդ զայսոսիկ ասէր ծերունին, և այս վերջին բանք էին խորշոմեալ շրթանցն : Եւ ահա ոմն բաղխէր առ դրանն : Եւ եկն ոմն մի ճաշակել ընդ նմա զթանիկն : Եւ մին այն բաղխեաց զդուռնն 'ի մթան գիշերի : — Զինչ ինչ ասաց նա յաղքատիկ տեղուջն անդ՝ 'ի խօսակցելն ընդ նմա վայրիկ մի, զայն ես ոչ գիտեմ. բայց յորժամ դրացիքն տեսին զծերունին ժպտեալ և բերկրեալ, ասէին. « Այնպէս իմն թուի դա՝ որպէս թէ ընդ առաջ ելեալ և տեսեալ իցէ զերեսս Գրիստոսի, և նովին դիմօք ժմտեցելովք տարածեալ զբազուկս և գիրկ ընդ խառն ընդ նմա եղեալ » :

ԻՆՃԵԼՈՒ

Անդիւսի քերդոյ նոր :